Ատելության խոսքի համար պատասխանատվության ապահովման իրավական հիմնախնդիրը

Սյուզաննա Սողոմոնյան

Անոտացիա

Հետազոտությունը նպատակ ունի ներկայացնել Հայաստանի Հանրապետությունում ատելության խոսքի համար պատասխանատվության հայեցակարգային խնդիրների ներկա վիճակը: Նկատի ունենալով թեմայի կարևորությունը՝ հետազոտությունը գնահատում է Հայաստանի Հանրապետությունում ատելության խոսքի դեմ պայքարի առկա մեխանիզմները: Հիմնվելով միջազգային փորձի և չափանիշների վրա՝ հետազոտությունը ներկայացնում է Հայաստանում ատելության խոսքի դեմ պայքարում վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության հնարավոր գործիքները:

Հետազոտության շրջանակներում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ պետական ռեսուրսների արդյունավետության և ատելության խոսքի համար քրեական պատասխանատվության հարաբերակցությունը, ատելության խոսքի համար վարչական և քաղաքացիական պատասխանատվության իրավական բնույթն ու արդյունավետությունը: Վերջում կատարված վերլուծության հիման վրա հետազոտությունը ներկայացնում է մի շարք գործնական եզրակացություններ և մի շարք առաջարկություններ՝ ուղղված ատելության խոսքի համար հայրենական պատասխանատվության կառուցակարգը բարեփոխելուն:

Հետազոտության արդյունքում կատարվել են հետևյալ եզրահանգումները.

1) գործող քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածով նախատեսված ձևակերպմամբ ծանր վիրավորանքը պետք է ապաքրեականացնել,
2) ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ հասարակական կարգի դեմ ոտնձգվող վարչական իրավախախտումների շարքում պետք է նախատեսել վիրավորանքի համար վարչական պատասխանատվություն,
3) պետք է ամրապնդել ատելության խոսքի համար քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցները՝ նախատեսելով տարբերակված փոխհատուցման չափ՝ կախված վիրավորանքի աստիճանից, սուբյեկտից և այլ հատկանիշներից,
4) ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվության միջոցը պահպանելու դեպքում այն պետք է նախատեսել միայն վարչական պրեուդիցիայի եղանակով, այն է՝ սահմանելով, որ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում արարքը կրկնելու դեպքում միայն անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անոտացիա **2**

Հապավումների ցանկ **4**

Նախաբան **5**

Բաժին 1. Ատելության խոսքի համար պատասխանատվության ապահովման միջազգային փորձը **7**

1. Ատելության խոսքի համար վարչական պատասխանատվության ապահովման միջազգային փորձը։ 7

2. Ատելության խոսքի համար քաղաքացիական պատասխանատվության ապահովման միջազգային փորձը։ 8

3. Ատելության խոսքի համար քրեական պատասխանատվության ապահովման միջազգային փորձը։ 10

Բաժին 2. Ատելության խոսքի համար պատասխանատվության ապահովման ազգային փորձը **13**

1. Ատելության խոսքի համար վարչական պատասխանատվության ապահովման հայաստանյան փորձը։ 13

2. Ատելության խոսքի համար քաղաքացիական պատասխանատվության ապահովման հայաստանյան փորձը։ 13

3. Ատելության խոսքի համար քրեական պատասխանատվության ապահովման հայաստանյան փորձը։ 17

Եզրակացություն **21**

Առաջարկություններ **23**

Գրականություն **24**

Աբստրակտ **25**

Abstract **25**

Հապավումների ցանկ

ԳԴ	ՀՀ գլխավոր դատախազություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵՄ	Եվրոպական միություն
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
ՄԻԵԿ	«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիա
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՍԴ	ՀՀ սահմանադրական դատարան
ՎԴ	ՀՀ վճռաբեկ դատարան

Նախաբան

Խոսքի ազատության երաշխիքի ապահովումը յուրաքանչյուր իրավական պետության պոզիտիվ պարտավորություններից է։ Սակայն, ինչպես ՄԻԵԿ-ի 10-րդ հոդվածով ամրագրված արտահայտվելու ազատության, այնպես էլ Սահմանադրության 42-րդ հոդվածով նախատեսված կարծիքի արտահայտման ազատության իրավունքը բացարձակ չէ։ Այն վերջանում է այնտեղ, որտեղ այս իրավունքը միջամտում է այլոց հիմնական իրավունքներին ու ազատություններին և պարունակում է ատելություն։ Թեև այս սահմանն իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան հստակեցված չէ և հաճախ գործնականում դժվար է որոշել այն՝ պայմանավորված նաև «ատելության խոսք» ձևակերպման անորոշությամբ, իրավունքի գերակայության վրա հիմնված պետության պարտավորություններից է նաև այդ սահմանի պաշտպանությունը։ Այս առումով անհրաժեշտ է մի կողմից՝ ապահովել անձանց ազատ արտահայտման իրավունքը, մյուս կողմից՝ թույլ չտալ, որ այն վնաս պատճառի այլ անձանց պատվին, արժանապատվությանը և այլ հիմնարար իրավունքներին։

Նշված հավասարակշռության ապահովումը հնարավորություն է տալիս պետությանն ապահովել հանրային խոսքի քաղաքակրթությունը, հրապարակված հանրային խոսքի համար հաշվետվողականությունը, հանրային խոսքի հրապարակման կառուցողական հարթակների զարգացումը, որոնք էլ քաղաքացիների պատվի, արժանապատվության, այլ իրավունքների և ազատությունների պաշտպանության անկյունաքարն են։ Հենց այդ հանրային շահի պաշտպանության օրակարգն է թելադրում պետությանը նաև սահմանել համապատասխան կառուցակարգեր, որոնք ի թիվս հանրային իրազեկման միջոցառումների՝ պատասխանատվության գործիքակազմի կիրառմամբ կնպաստեն նշված պահանջների պահպանմանը և ատելության խոսքի տարածման կանխարգելմանը։

Ուստի, պետության առաջնահերթ մարտահրավերներից է դարձել նաև այդպիսի խոսքի համար համապատասխան պատասխանատվության միջոցների սահմանումը։ Այս առումով ճիշտ գործիքակազմի ընտրությունը հաջողության գրավականներից մեկն է, քանզի իրավական պատասխանատվության արդյունավետ կառուցակարգը կարող է ունենալ ծանրակշիռ պրևենտիվ, այն է՝ կանխարգելիչ նշանակություն, և նվազեցնել հասարակությունում ատելության խոսքի արտահայտումն ու տարածումը։ Այդ պատճառով էլ միջազգային հանրությունը, միջազգային կառույցները, այդ թվում՝ ՄԱԿ-ը, ԵԽ-ն, միջազգային դատական ատյանները, այդ թվում՝ ՄԻԵԴ-ը, հատուկ ուշադրություն են ցուցաբերում ատելության խոսքի կանխարգելման հնարավորությունների վրա։ Նման պայմաններում միջազգային փորձի ուսումնասիրությունը և քաղաքացիական, վարչական կամ քրեական պատասխանատվության միջոցներից առավել արդյունավետի ընտրությունն իր ազդեցությունը կարող է ունենալ ատելության խոսքի զսպման հնարավորությունների վրա։

Նշվածն ինչպես արտասահմանյան երկրների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության օրակարգում առկա իրավական խնդիրների շարքում է։ Մի կողմից՝ վիրավորանքի տարածման միտումները նվազեցնելու, մյուս կողմից՝ հանրային ռեսուրսների կառավարման արդյունավետությունն ապահովելու պահանջը հրամայական է դարձնում համակողմանի ուսումնասիրություն կատարելը և պատշաճ գործիքակազմ մշակելը՝ առկա մարտահրավերը հաղթահարելու համար։ Ուստի, սույն հետազոտության շրջանակներում քննարկման առարկա կդարձվի նշված հարցը՝ համապատասխան առաջարկությունների ներկայացմամբ։

Հետազոտությունը կատարելիս օգտագործվել են ինչպես միջազգային, այնպես էլ հայրենական աղբյուրներ։ Միջազգային աղբյուրների թվում են Ավստրիայի, Գերմանիայի, Հունգարիայի, ինչպես նաև այլ երկրների, այդ թվում՝ ԵՄ երկրների համեմատական վերլուծություններն ու զեկույցներն ատելության խոսքի դեմ պայքարում կիրառվող գործիքների արդյունավետության մասին։ Հայրենական աղբյուրները ներառում են ատելության խոսքի դեմ պայքարի հիմնական օրենսդրական ակտերը, այդ թվում՝ օրենսդրական փոփոխություններն ու դրանց վերաբերյալ օրենսդրի կողմից տրված հիմնավորումները, որոնց գնահատմամբ միայն կարելի է որոշել դրանց ընդունման նպատակահարմարությունն ու արդյունավետությունը Միաժամանակ, աղբյուրները ներառում են նաև իրավակիրառ պրակտիկայի նյութեր, այդ թվում՝ ՎԴ-ի, ՍԴ-ի և ՄԻԵԴ-ի դատական ակտեր։

Պայմանավորված սույն հետազոտության նպատակով և խնդիրներով՝ այն իրականացվել է համընդհանուր՝ դիալեկտիկական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի և սինթեզի, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և իրավահամեմատական մեթոդների կիրառմամբ։

Սույն հետազոտությունը բաղկացած է երկու բաժնից, որոնք համապատասխանաբար նվիրված են ատելության խոսքի համար պատասխանատվության ապահովման միջազգային և հայրենական փորձի ուսումնասիրությանը։ Առաջին բաժնում կներկայացվի միջազգային փորձը՝ ատելության խոսքի համար վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության սահմանման առանձնահատկությունների մասով։ Երկրորդ բաժնում անդրադարձ կկատարվի հայրենական կարգավորումներին, պատասխանատվության առանձնահատկություններին։ Միաժամանակ, այս բաժնում նաև հատուկ ուշադրության կարժանանա այն հանգամանքը, որ Հայաստանում ատելության խոսքի դեմ պայքարը վերջին ժամանակաշրջանում կենտրոնացվել է քրեական պատասխանատվության ճանապարհով, որի սահմանադրականության վերաբերյալ նաև ՍԴ-ն կայացրել է որոշում, որը նույնպես կդառնա քննարկման առարկա։ Ուսումնասիրության վերջում կներկայացվեն հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները։

Բաժին 1. Ատելության խոսքի համար պատասխանատվության ապահովման միջազգային փորձը

1. Ատելության խոսքի համար վարչական պատասխանատվության ապահովման միջազգային փորձը։

ԵՄ անդամ երկրներում ատելության խոսքի համար պատասխանատվության ապահովման միջոցների վերաբերյալ աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԵՄ տարածքում կիրառվում են տարաբնույթ միջոցներ հասարակության կայուն հիմքերը խարխլող ատելության խոսքի տարածումը կանխարգելելու համար։ Ընդ որում, նշվածը հիմնվում է ԵՄ արժեքների վրա, որոնք ուղենիշային նշանակություն ունեն այս գործառույթի իրականացման համար (Bayer and Bárd, 2020, p. 13)։

Սակայն, հատկանշական է այն հանգամանքը, որ ըստ աղբյուրների՝ ատելության խոսքի դեմ պայքարում գերակշիռ դեպքերում օգտագործվում է վարչական օրենքը, այլ ոչ թե քրեական օրենսդրությունը՝ նպատակ ունենալով կիրառել ամենաքիչ միջամտություն դրսևորող միջոցները, երբ խնդրո առարկան խոսքի սահմանափակումներին է վերաբերում։ Նշված լուծումը հետապնդում է նաև այլ նպատակ, այդպիսի մոտեցումը որդեգրվում է նաև որպեսզի խուսափեն, որ ատելության խոսքով հանդես եկողները ներկայանան որպես արդարադատության համակարգի զոհեր (Bayer and Bárd, 2020, p. 14)։

Ինչ վերաբերում է բռնություն պարունակող ատելության խոսքին, ապա անդամ պետությունները պարտավորվում են ապահովել որպես ծանրացուցիչ հանգամանք՝ ռասիստական և այլատյացության դրդապատճառները, կամ որպես այլընտրանք՝ ամրագրվում է, որ դրանք հաշվի են առնվում տույժեր նշանակելիս (Bayer and Bárd, 2020, p. 14)։

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նկատել, որ ԵԽ-ն ընդունելի է համարում ատելության խոսքի համար վարչական պատասխանատվության սահմանումը։ Մասնավորապես, ԵԽ թիվ 97(20) հանձնարարականի համաձայն՝ «Անդամ պետությունների կառավարությունները, պետական մարմինները և պետական հաստատություններն ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում, ինչպես նաև պաշտոնյաները հատուկ պատասխանատվություն են կրում հայտարարություններից՝ մասնավորապես լրատվամիջոցներին ուղղված հայտարարություններից զերծ մնալու համար, որոնք ողջամտորեն կարող են ընկալվել որպես ատելության խոսք»՝ հավելելով, որ «նման հայտարարությունները պետք է […] հրապարակայնորեն մերժվեն, երբ որ դրանք արտահայտվեն»։ Նույն փաստաթղթով նախատեսված իրավական գործիքակազմը բազմազան է և ընդգրկում է ոչ միայն քրեական, այլև քաղաքացիական և վարչական պատասխանատվության միջոցների կիրառումը[1]։

ԵՄ տարածքում կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վարչաիրավական ընթացակարգերը, որոնք ունեն առավել նվազ ազդեցություն, կարող են առաջացնել առավել մեծ փոփոխություններ, քան առավել թանկ արժեք ունեցող քրեական դատավարությունը։ Դրանք հեշտ և արագ ընթացակարգեր են, որոնք կստեղծեն տեղական իշխանությունների մի քանի ցանց՝ պատասխանատու ատելության խոսքի, խտրականության կամ ատելության հանցագործության

---

[1] Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտե, 1997։ *Ատելության խոսքի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 հանձնարարական, սկզբունք 1, 2*

https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectID=0900001680505d5b

բոլոր դրսևորումների դեմ պայքարելու և հակազդելու համար։ Նրանք կարող են արագ արձագանքել, ամրապնդել բարոյական արժեքները տեղական մակարդակում, բավարարել ատելության խոսքի ավելի ծանր շեմին և անհատական պատասխանատվության ցածր շեմին՝ վերականգնելով թիրախային խմբի կամ անհատի արժանապատվությունը՝ կանոնավոր կերպով ամրապնդելով հանդուրժողականության և հավասարության սոցիալական արժեքները (Bayer and Bárd, 2020, p. 122)։

Բացի այդ, հարկ է նկատել, որ ատելության խոսքի դեմ պայքարում քրեական պատասխանատվության միջոցները փոխարինվել են նաև վարչական պատասխանատվության միջոցներով ԵՄ տարածքից դուրս գտնվող երկրներում։ Օրինակ՝ Ռուսաստանի Դաշնությունում 2011 թվականին վիրավորանքի համար քրեական պատասխանատվությունը վերացվել է և հանվել քրեական օրենսգրքից։ Այնուհետև վիրավորանքի համար պատասխանատվություն է նախատեսվել Ռուսաստանի Դաշնության Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով (Հոդված 5.61), որը նախատեսում է պատիժ՝ կախված վիրավորանքի տեսակից, տուգանք՝ 1000-ից մինչև 5000 ռուբլի՝ քաղաքացիների համար և 50000-ից 500000 ռուբլի՝ իրավաբանական անձանց համար (Griffen, 2017, p. 198)։ Նույն կերպ, 2011 թվականին զրպարտությանը նվիրված հոդվածն է ապաքրեականացվել, հանվել Քրեական օրենսգրքից, որից հետո զրպարտությունը ճանաչվել է որպես վարչական պատժելի իրավախախտում՝ տույժի նշանակմամբ (Griffen, 2017, p. 199)։

2015 թվականի դեկտեմբերի 4-ին Մոնղոլիայի խորհրդարանի կողմից հաստատված նոր Քրեական օրենսգիրքը նախատեսել է չեղյալ համարել զրպարտության վերաբերյալ ընդհանուր քրեական դրույթները։ Նոր Վարչական օրենսգիրքը նախատեսել է զրպարտության հետ կապված հետևյալ դրույթը. անձի պատիվն ու արժանապատվությունը արատավորող տեղեկությունների բացահայտման և տարածման դեպքում՝ լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի միջոցով՝ ֆիզիկական անձը կտուգանվի 1000 դրամական միավորի չափով, իսկ իրավաբանական անձինք՝ 10000 դրամական միավորի չափով (Griffen, 2017, p. 167)։

Հարկ է նաև նկատել, որ Մերձբալթյան երկրներից Լիտվայում վարչական պատասխանատվության միջոցներ են կիրառվում նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց վիրավորանքի դեպքում։ Այսպես, լրատվամիջոցների միջոցով Լիտվայի նախագահին վիրավորելու համար զրպարտելը վարչական իրավախախտում է՝ համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ Լիտվայի օրենսգրքի 214(6) հոդվածի։ Որպես սանկցիա նախատեսված է 144-ից մինչև 289 եվրո տուգանքը։ Կրկնվող իրավախախտներին սպառնում է ավելի բարձր չափի տուգանք (Griffen, 2017, p. 147)։ Միաժամանակ, 2015 թվականի հունիսին Լիտվայի խորհրդարանը չեղյալ է համարել Լիտվայի քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածը, որը քրեական պատասխանատվություն էր սահմանում վիրավորանքի համար և 290-րդ հոդվածը, որը քրեական պատասխանատվությունը էր նախատեսում քաղաքացիական ծառայողին վիրավորելու համար (Griffen, 2017, p. 148)։

2. Ատելության խոսքի համար քաղաքացիական պատասխանատվության ապահովման միջազգային փորձը։

Կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մի շարք երկրներում օգտագործվում են քաղաքացիական պատասխանատվության միջոցներն ատելության խոսքը զսպելու և այդպիսի խոսքն արտահայտած անձանց պատասխանատվության ենթարկելու համար։ Քաղաքացիական պատասխանատվությունը, որպես կանոն, ընդգրկում է դրամական փոխհատուցման ստացումն ու հրապարակված տեղեկատվության հերքումը, ներողության հայցումը հայցվորից։

Այսպես, Ավստրիայի օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լրատվամիջոցներին նվիրված օրենքի, հավասարության մասին օրենսդրության և վնասի հատուցման վերաբերյալ քաղաքացիական օրենսգրքի շրջանակներում նախատեսված են համապատասխան կարգավորումներ: Նշված կարգավորումների շրջանակներում ատելության խոսքի զոհ դարձած անձինք իրավունք ունեն հայց ներկայացնել և պահանջել տեղեկատվության հերքում, պատճառված վնասի հատուցում (ARTICLE 19, 2018a, p. 29):

Հատկանշական է, որ 2012 թվականին նախկին Հարավսլավիայի Մակեդոնիայի Հանրապետությունը չեղյալ է հայտարարել զրպարտության մասին քրեական օրենքները և նույն թվականին ընդունել «Վիրավորանքի և զրպարտության համար քաղաքացիական պատասխանատվության մասին» օրենքը (Griffen, 2017, p. 235):

Գործնականում Իսլանդիայում զրպարտության գրեթե բոլոր գործերը հարուցվում են որպես այսպես կոչված «քաղաքացիական-քրեական գործեր»: Սա նշանակում է, որ անձը, որը պնդում է, որ իրեն զրպարտել են Քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով, քաղաքացիական հայց է ներկայացնում, սակայն պահանջում է, որ մեղադրյալը պատժվի Քրեական օրենսգրքի պայմաններով (այսինքն՝ տուգանք կամ ազատազրկում): Այս հայցն ինքնաբերաբար բաղկացած է նաև վնասի հատուցման մասնավոր պահանջից, որպեսզի հայցվորը, միաժամանակ, պահանջի փոխհատուցում ցավի և տառապանքի համար՝ համաձայն դելիկտային պատասխանատվության մասին օրենքի: Ենթադրվում է, որ զրպարտության գործերը՝ որպես քաղաքացիական-քրեական և ոչ զուտ քաղաքացիական գործեր, հարուցելու հիմնական պատճառն այն է, որ վերջիններիս դեպքում հայցվորները պետք է վճարեն դատական վճարներ, որոնք կարող են էական լինել, հատկապես, եթե գործը բողոքարկվի: Սրանից խուսափելու համար հայցվորները պարզապես քաղաքացիական-քրեական հայց են ներկայացնում և պահանջում քրեական պատիժ, թեև պարզ է, որ դատարանները սովորաբար փոխհատուցում են միայն քաղաքացիական վնասը (Griffen, 2017, p. 119):

Հունգարիայում ևս «ատելության խոսքի» զոհերը քաղաքացիական օրենսդրության համաձայն ունեն երկու տեսակի պաշտպանության միջոցներ (սակայն, մեկ հարցի առնչությամբ կարող է հետապնդվել միայն մեկ տեսակի գործողություն): Նրանք կարող են՝

1) Քաղաքացիական օրենսգրքում «համայնքի նկատմամբ ատելության խոսքի մասին» դրույթներով հարուցել քաղաքացիական հայց: Թիրախային համայնքի ցանկացած անդամ կարող է հայց ներկայացնել իր համայնքի հեղինակությանը վնաս պատճառող արտահայտությունների դեմ: Ինչ վերաբերում է իրավական պաշտպանության միջոցներին, ազդակիր համայնքի ցանկացած անդամ կարող է դատարանից խնդրել խախտում հայտարարելու, խախտումը դադարեցնելու կարգադրություն և պահանջել փոխհատուցում (վնասներ): Այնուամենայնիվ, օրենսդրությունը սահմանափակում է պաշտպանված խմբերը հունգարական ազգով և ազգային, էթնիկ, ռասայական և կրոնական խմբերով, և քաղաքացիական հայցը պետք է հարուցվի 30-օրյա օրենքով սահմանված ժամկետում:
2) «Հավասար վերաբերմունքի մասին» օրենքի դրույթներով ոտնձգությունների համար դատարանների առջև քաղաքացիական հայց հարուցել՝ ղեկավարվելով նաև Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված հիմնարար իրավունքների մասին դրույթներով (ARTICLE 19, 2018b, p. 24):

Լեհաստանում «ատելության խոսքի» զոհերը կարող են քաղաքացիական հայց ներկայացնել «մարդու անձնական շահերի» պաշտպանության դրույթների համաձայն և կարող են դիմել տարբեր միջոցների, այդ թվում՝ փոխհատուցման (ARTICLE 19, 2018b, p. 25):

3. Ատելության խոսքի համար քրեական պատասխանատվության ապահովման միջազգային փորձը:

Նախորդ կետերում ներկայացված վարչական և քաղաքացիական պատասխանատվության միջոցների հետ մեկտեղ, արդարության համար հարկ է նաև նշել, որ մի շարք երկրներում որպես գործուն միջոց՝ կիրառվում է նաև քրեական պատասխանատվության գործիքակազմը՝ ատելության խոսքի արտահայտումն ու տարածումը կանխարգելելու համար: Նման դեպքում հրապարակված ատելության խոսքի համար պատասխանատվությունն ընդգրկում է տուգանքից մինչև ազատազրկում:

Այսպես, Դանիայում քրեականացված են վիրավորանքն ու զրպարտությունը, պաշտոնատար անձին և պետության գլխին զրպարտելը: Արարքը պատժվում է ինչպես տուգանքով, այնպես էլ ազատազրկմամբ:

Գերմանիայում քրեական օրենսգիրքը քրեական պատասխանատվություն է սահմանում վիրավորանքի համար՝ որպես պատիժ նախատեսելով տուգանք կամ մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկում: Դրա պաշտպանության շրջանակը ներառում է ատելության խոսքը՝ «ազգային, ռասայական, կրոնական խմբի կամ խմբի դեմ, որը որոշվում է իրենց էթնիկ ծագմամբ, բնակչության հատվածների կամ անհատների դեմ՝ վերոհիշյալ խմբերից մեկին կամ բնակչության առանձին հատվածներին պատկանելու պատճառով» (ARTICLE 19, 2018c, pp. 21-22): Քրեական օրենքը պատասխանատվություն է նախատեսում հետևյալ արարքների համար.

1) պաշտպանված խմբերի դեմ «ատելության հրահրում»,
2) «բռնի կամ կամայական միջոցների կոչեր» պաշտպանված խմբերի դեմ, պաշտպանված խմբերին վիրավորելով այլոց մարդկային արժանապատվության նվաստացումը,
3) «զրպարտելը», գրավոր նյութերի տարածումը, ատելություն կամ բռնի կամ կամայական միջոցներ հրահրող այլ գրավոր նյութեր հրապարակայնորեն ցուցադրելը, տեղադրելը, ներկայացնելը կամ հասանելի դարձնելը,
4) առաջարկել, մատակարարել, համալրել, ներմուծել կամ արտահանել կամ հանրությանը կամ 18 տարեկանից ցածր անձանց հասանելի հրապարակումներ և գրավոր նյութեր պատրաստելը՝ ներառյալ հեռարձակվող լրատվամիջոցների կամ հեռահաղորդակցության ծառայությունների միջոցով: «Նյութը» ներառում է ձայն, պատկեր և տվյալների պահպանման մեդիա,
5) հրապարակումներ, որոնք «կարող են ծառայել որպես ցուցում անօրինական արարքի համար» կամ խրախուսել ուրիշներին կատարել այդպիսի արարքը. այդ գործողությունները ներառում են, ի թիվս այլոց, «հանրային խաղաղության» խախտում, ցեղասպանություն, մարդկության դեմ հանցագործություններ և ռազմական հանցագործություններ: Նման նյութերը, եթե դիտավորյալ տարածվել են կամ նախատեսված են այդպիսի տարածման համար, կարող են առգրավվել և ոչնչացվել՝ նման նյութերի արտադրության համար նախատեսված սարքավորումների հետ մեկտեղ,
6) տարածել, արտադրել, համալրել, ներմուծել, արտահանել կամ տվյալների պահպանման միջոցների միջոցով հանրությանը հասանելի դարձնել Գերմանիայում կամ արտերկրում որոշ հակասահմանադրական կազմակերպությունների քարոզչությունը, «որոնց բովանդակությունն ուղղված է ազատ, ժողովրդավարական սահմանադրական կարգի կամ գաղափարի դեմ. ազգերի ընկերակցությունը»,
7) որոշ հակասահմանադրական կազմակերպություններից մեկի խորհրդանիշների ներքին տարածում կամ հրապարակայնորեն օգտագործում (հանդիպման կամ գրավոր նյութերի

միջոցով) կամ արտադրել, համալրել, ներմուծել կամ արտահանել այնպիսի առարկաներ, որոնք պատկերում կամ պարունակում են այդպիսի խորհրդանիշներ՝ Գերմանիայում կամ արտասահմանում տարածելու կամ օգտագործելու համար:

Միաժամանակ զեկույցներում նշվում է, որ չնայած գերմանական օրենսդրությամբ արտահայտվելու ազատության և հավասարության իրավունքին տրված է բավականին ամուր պաշտպանություն՝ «ատելության խոսքի» վերաբերյալ գոյություն ունեցող իրավական դաշտը լիովին չի համապատասխանում մարդու իրավունքների միջազգային չափանիշներին: Քրեական իրավունքը չի առաջարկում ուղեցույց կամ շեմային թեստ՝ օգնելու «ատելության խոսքի» դեպքերի գնահատմանը: Գերմանիայի բարձրագույն դատարաններն իրենց իրավագիտության մեջ բազմիցս ապացուցել են, որ, փորձելով պաշտպանել հանրային բանավեճը՝ նրանք հակված են «ատելության խոսքի» գործերում կիրառել «ճշմարտության հետապնդման», այլ ոչ թե «վնասելու» պահանջը, մասնավորապես՝ Հոլոքոստի հետ կապված ժխտման գործերում: Ավելին, վերադաս դատարանները հաճախ հակասական որոշումներ են կայացրել «ատելության խոսքի» համեմատելի գործերում՝ ստեղծելով իրավական անորոշություն այն մասին, թե ինչպես պետք է համապատասխան դրույթները մեկնաբանվեն ստորադաս դատարանների կողմից: Բացի այդ, Քրեական օրենսգիրքը պարունակում է մի շարք դրույթներ, օրինակ՝ վիրավորանքի, զրպարտության, կրոնի զրպարտության և պետական խորհրդանիշների վիրավորանքի վերաբերյալ, որոնք ըստ զեկույցի՝ հակասում են մարդու իրավունքների միջազգային չափանիշներին (ARTICLE 19, 2018c, p. 4):

Հունգարիայում ևս քրեական պատասխանատվություն է նախատեսված ատելության խոսքի այնպիսի դրսևորումների դեմ, ինչպիսիք են, ի թիվս այլնի, համայնքի նկատմամբ բռնության հրահրումը, ազգային խորհրդանիշի հայհոյանքը, տոտալիտարիզմի խորհրդանիշների օգտագործումը (ARTICLE 19, 2018d, p. 19):

Միաժամանակ, միջազգային զեկույցները նշում են, որ Հունգարիայի «ատելության խոսքի մասին» օրենսդրության մեջ որոշակի առաջադեմ զարգացումներ են տեղի ունեցել վարչական, քաղաքացիական, քրեական և լրատվամիջոցների վերաբերյալ օրենքներում: Այնուամենայնիվ, քրեական օրենսդրության մեջ նախատեսված արգելքները լիովին չեն համապատասխանում խոսքի ազատության միջազգային չափանիշներին: Քրեական օրենսդրությունն արգելում է մի շարք անորոշ իրավախախտումներ, որոնք հակասում են միջազգային իրավունքին: Ամենակարևորը, ըստ զեկույցի, խնդրահարույց է գործող քրեաիրավական պաշտպանության մեկնաբանությունն ու իրականացումը: Պետական իշխանությունները չեն կարողանում արդյունավետ կերպով կիրառել «ատելության խոսքի» դեմ առկա մեխանիզմները: Այս առնչությամբ «իրավապահ մարմինների անգործության արդյունքում համապատասխան քրեական դրույթները մնում են փաստացի քնած՝ նույնիսկ ամենածանր դեպքերը, որոնք հասնում են դրդման շեմին, մնում են անպատիժ» (ARTICLE 19, 2018d, p. 4):

Հունաստանում ևս քրեական պատասխանատվություն է նախատեսված վիրավորանքի համար քրեական օրենսգրքի 361-րդ հոդվածով: Որպես պատիժ նախատեսված է կալանքը և տուգանքը (Griffen, 2017, p. 108):

Պորտուգալիայում նույնպես քրեական պատասխանատվություն է սահմանված վիրավորանքի, զրպարտության համար՝ տարբեր դրսևորումներով: Միաժամանակ հատուկ քրեական պատասխանատվություն է սահմանված նաև, երբ կատարվում է զրպարտություն կամ վիրավորանք իշխանական և հասարակական գործիչների լայն շրջանակի դեմ: Որպես պատիժ նախատեսված է ազատազրկումը և տուգանքը (Griffen, 2017, p. 186):

2015 թվականի մայիսին Մամուլի միջազգային ինստիտուտը հրապարակել է «Զրպարտության մասին քրեական օրենքները Պորտուգալիայում» 20 էջանոց զեկույց՝ Պորտուգալիայում զրպարտության մասին քրեական օրենքների կիրառման արդյունքում արտահայտվելու ազատության խնդիրների մասին: Զեկույցում բացատրվում էր, որ դա ունի երկու պատճառ. «Պորտուգալիայում զրպարտության մասին հնացած քրեական դրույթների առկայությունը, որոնք էապես չեն համապատասխանում միջազգային չափանիշներին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանում (ՄԻԵԴ) Պորտուգալիայի դեմ կայացվող վճիռների անսովոր մեծ թիվը՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ հոդվածի խախտումների համար, որոնցից շատերը վերաբերում են զրպարտության մասին օրենքների կիրառմանը» (Griffen, 2017, p. 188):

Բաժին 2. Ատելության խոսքի համար պատասխանատվության ապահովման ազգային փորձը

1. Ատելության խոսքի համար վարչական պատասխանատվության ապահովման հայաստանյան փորձը:

Հայաստանի Հանրապետությունում ատելության խոսքի դեմ վարչական պատասխանատվության արդյունավետ միջոցների ընդարձակ կազմ նախատեսված չէ:

Հասարակական կարգի դեմ ուղղված վարչական իրավախախտումների շարքում օրենսդիրը միայն 2012 թվականին է նախատեսել ոստիկանության ծառայողին կամ զինծառայողին վիրավորելը որպես վարչական իրավախախտում՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 172.3-րդ հոդվածի ներքո: Այդ հոդվածի համաձայն՝

> *«Ոստիկանության ծառայողին կամ զինծառայողին հրապարակայնորեն վիրավորելը՝ կապված նրա կողմից հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման պարտականությունները կատարելու հետ, առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով»:*

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը խնդրո հարցով այլ կարգավորում չի նախատեսում:

2. Ատելության խոսքի համար քաղաքացիական պատասխանատվության ապահովման հայաստանյան փորձը:

Ատելության խոսքից անձի քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցների օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերաբերելի կարգավորումները զետեղված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքում[2]:

Այսպես, նախ օրենսգիրքը որպես ընդհանուր կանոն՝ 19-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում սահմանում է, որ՝

> *«Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և զրպարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով»:*

Այնուհետև քաղաքացիական օրենսգրքում լրացված 1087.1-րդ հոդվածը[3] մանրամասնում է անձի պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգն ու պայմանները: Մասնավորապես, այդ հոդվածը երաշխավորում է յուրաքանչյուրի իրավունքը դիմելու դատարան՝ վիրավորանք հասցրած կամ զրպարտություն կատարած անձի դեմ:

---

[2] ՀՀ Ազգային ժողով, 1998: *Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք*, Երևան

https://www.arlis.am/documentview.aspx?docid=165457

[3] ՀՀ Ազգային ժողով, 2010: *Հայաստանի Հանրապետության օրենքը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին, N ՀՕ-97-Ն*, Երևան

https://www.arlis.am/documentview.aspx?docid=58945

Նույն հոդվածը նաև սահմանում է խնդրո առարկա հարցի վերաբերյալ մի շարք հասկացությունների սահմանումները: Այսպես,

«(…) [Վ]իրավորանքը խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը արատավորելու նպատակով կատարված հրապարակային արտահայտությունն է:

(…) [Հ]րապարակային արտահայտությունը տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ կարող է չհամարվել վիրավորանք, եթե այն հիմնված է ստույգ փաստերի վրա (բացառությամբ բնական արատների) կամ պայմանավորված է գերակա հանրային շահով:

(…) [Զ]րպարտությունը անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը:

Միաժամանակ, նշված հոդվածը կարգավորում է կողմերի միջև ապացուցման բեռի բաշխման կանոնները: Այսպես, զրպարտության վերաբերյալ գործերով անհրաժեշտ փաստական հանգամանքների առկայության կամ բացակայության ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը: Այն փոխանցվում է հայցվորին, եթե ապացուցման պարտականությունը պատասխանողից պահանջում է ոչ ողջամիտ գործողություններ կամ ջանքեր, մինչդեռ հայցվորը տիրապետում է անհրաժեշտ ապացույցներին:

Վերոգրյալի հետ մեկտեղ սահմանվում են այն դեպքերը, երբ արված հրապարակային արտահայտությունները չեն համարվում զրպարտություն: Այսպես, եթե

1) *դրանք տեղ են գտել մինչդատական կամ դատական վարույթի ընթացքում վարույթի մասնակցի կողմից քննվող գործի հանգամանքների վերաբերյալ կատարված արտահայտությունում կամ ներկայացրած ապացույցներում.*
2) *դա տվյալ իրավիճակում և իր բովանդակությամբ պայմանավորված է գերակա հանրային շահով, և եթե փաստացի տվյալները հրապարակայնորեն ներկայացրած անձն ապացուցի, որ ողջամտության սահմաններում ձեռնարկել է միջոցներ՝ պարզելու դրանց ճշմարտությունը և հիմնավորվածությունը, ինչպես նաև հավասարակշռված և բարեխղճորեն է ներկայացրել այդ տվյալները.*
3) *այն բխում է զրպարտության ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի հրապարակային ելույթից կամ պատասխանից կամ նրանցից ելնող փաստաթղթից:*

Նույն հոդվածը նաև սահմանում է, որ անձն ազատվում է վիրավորանքի կամ զրպարտության համար պատասխանատվությունից, եթե իր արտահայտած կամ ներկայացրած փաստացի տվյալները լրատվական գործակալության տարածած տեղեկատվության, ինչպես նաև այլ անձի հրապարակային ելույթի հրապարակման, պաշտոնական փաստաթղթերի, լրատվության այլ միջոցի կամ հեղինակային որևէ ստեղծագործության բովանդակած տեղեկատվության բառացի կամ բարեխիղճ վերարտադրությունն են, և դա տարածելիս հղում է կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին):

Օրենսդիրը ամրագրել է նաև այն միջոցների շրջանակը, որոնք տուժողը կարող է պահանջել վիրավորանքի և զրպարտության դեպքում: Այսպես, վիրավորանքի դեմ անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

1) Հրապարակայնորեն ներողություն խնդրել: Ներողություն խնդրելու ձևը սահմանում է դատարանը:

2) Եթե վիրավորանքը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով լրիվ կամ մասնակի հրապարակել դատարանի վճիռը: Հրապարակման եղանակը և ծավալը սահմանում է դատարանը:
3) Սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 3000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Ինչ վերաբերում է զրպարտությանը, ապա անձը կարող է դատական կարգով պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝

1) Եթե զրպարտությունը տեղ է գտել լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ, ապա լրատվության այդ միջոցով հրապարակայնորեն հերքել զրպարտություն համարվող փաստացի տվյալները և (կամ) հրապարակել դրանց վերաբերյալ իր պատասխանը: Հերքման ձևը և պատասխանը հաստատում է դատարանը՝ ղեկավարվելով «Զանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
2) Սահմանված նվազագույն աշխատավարձի մինչև 6000-ապատիկի չափով փոխհատուցում վճարել:

Միաժամանակ հարկ է նկատել, որ եթե վիրավորելիս կամ զրպարտելիս հողում չի կատարվել տեղեկատվության աղբյուրին (հեղինակին) կամ տեղեկատվության աղբյուրը (հեղինակը) հայտնի չէ կամ լրատվական գործունեություն իրականացնողը, օգտվելով տեղեկատվության աղբյուրը չբացահայտելու իր իրավունքից, չի հայտնում հեղինակի անունը, ապա փոխհատուցման պարտավորությունը կրում է վիրավորանքը կամ զրպարտությունը հրապարակային ներկայացնողը, իսկ եթե այն ներկայացվել է լրատվական գործունեություն իրականացնողի տարածած տեղեկատվության մեջ՝ ապա լրատվական գործունեություն իրականացնողը:

Պատասխանատվության միջոցներ կիրառելիս և փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը հաշվի է առնում կոնկրետ գործի առանձնահատկությունները՝ ներառյալ վիրավորանքի կամ զրպարտության եղանակը և տարածման շրջանակը, վիրավորողի կամ զրպարտողի գույքային դրությունը: Միաժամանակ, փոխհատուցման չափը սահմանելիս դատարանը չպետք է հաշվի առնի վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով պատճառված գույքային վնասը: Սակայն անձն իրավունք ունի իրեն վիրավորանք հասցրած կամ զրպարտած անձից դատական կարգով պահանջել վիրավորանքի կամ զրպարտության հետևանքով իրեն պատճառված գույքային վնասները՝ ներառյալ ողջամիտ դատական ծախսերը և խախտված իրավունքների վերականգնման համար իր կատարած ողջամիտ ծախսերը:

Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է նշել, որ վերը սահմանված կարգով իրավունքի պաշտպանության հայց կարող է ներկայացվել դատարան՝ վիրավորանքի կամ զրպարտության մասին անձին հայտնի դառնալու պահից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, սակայն ոչ ուշ, քան վիրավորանքի կամ զրպարտության պահից վեց ամսվա ընթացքում:

ՀՀ ՍԴ-ը, անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի սահմանադրականությանը և գտնելով, որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին, նշել է, որ «(…) օրենսդիրը հստակեցրել է անձին «վիրավորանք» հասցնելու և (կամ) «զրպարտելու», այսինքն՝ որոշակի նպատակային գործողություններ կատարելու նորմատիվ-նկարագրական հատկանիշները, որոնցից միանշանակ բխում է, որ այդ գործողությունները պետք է կատարվեն իրականությանը չհամապատասխանող փաստացի տվյալները կամ «խոսքի, պատկերի, ձայնի, նշանի կամ այլ միջոցով պատիվը, արժանապատվությունը կամ գործարար

համբավը արատավորելու» նպատակ հետապնդող արտահայտությունը հրապարակայնորեն, այդ թվում՝ նաև լրատվության միջոցով ներկայացնելով: Ակնհայտ է, որ վեճի առարկա հոդվածի իրավակարգավորումը վերաբերում է միայն հանրության առջև, առնվազն երրորդ անձի ներկայությամբ անձին հանիրավի անվանարկելու հետևանքների հաղթահարմանը»[4]:

Նույն որոշման շրջանակներում, ՀՀ ՍԴ-ն նաև քննարկման առարկա է դարձրել «վիրավորանք» և «զրպարտություն» հասկացությունների բնորոշումները և արձանագրել, որ դա իրավակիրառ պրակտիկայի խնդիրն է: Նշված եզրահանգման հիմքում դրվել է նաև Վենետիկի հանձնաժողովի՝ 2009 թվականի հունիսի 23-ի թիվ CDL-AD(2009)037 միջանկյալ զեկույցում հայտնած կարծիքը, որ հոդվածում օգտագործված «վիրավորանք» և «զրպարտություն» եզրույթները հայաստանյան դատարանները պրակտիկայում կիրառելիս պետք է հաշվի առնեն Եվրոպական դատարանի՝ արտահայտվելու ազատությանը վերաբերող նախադեպային իրավունքը՝ մասնավորապես դրանում ձևակերպված այն պահանջը, որ պետք է տարբերակում կատարվի գնահատողական դատողությունների և փաստերի միջև[5]:

ՎԴ-ն, իր հերթին մեկնաբանելով վիրավորանքի գնահատման չափանիշները, արձանագրել է, որ

1) Արված արտահայտությունն իրականում պետք է արատավորի անձի պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը, ինչի փաստն ապացուցելու դատավարական բեռը ողջամտության սահմաններում կրում է հայցվորը:

2) Արատավորող արտահայտությունն այն արտահայտությունն է, որը հասարակության անդամների գնահատմամբ նսեմացնում է անձի արժանիքները հանրության շրջանում, նրան ենթարկում է ծաղրուծանակի, ունակ է անձին վերածել ատելության կամ արհամարանքի առարկայի կամ ստիպում է ամաչել անձին կամ այլ մարդկանց խուսափել տվյալ անձից:

3) Արտահայտություն կատարողն ի սկզբանե պետք է հետապնդի անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորելու նպատակ, այսինքն՝ պետք է իր կատարած արտահայտությամբ անձի հեղինակությունը նսեմացնելու և նրան նվաստացնելու դիտավորություն ունենա: Մասնավորապես, նման նպատակի առկայության մասին կարող է վկայել այնպիսի իրավիճակը, երբ անձը ողջամիտ բոլոր հնարավոր միջոցները չի ձեռնարկել տեղեկատվության՝ իրականությանը համապատասխանելու հանգամանքը ճշտելու համար կամ էլ գիտեր կամ ակնհայտորեն պետք է իմանար տեղեկատվության՝ ստույգ փաստերի վրա հիմնված չլինելու մասին: Այս փաստի ապացուցման բեռը նույնպես կրում է հայցվորը:

4) Արտահայտությունը՝ պետք է կատարված լինի հրապարակային ձևով, իսկ այդ փաստի ապացուցման դատավարական բեռը դարձյալ կրում է հայցվորը: Հրապարակային կարող են համարվել առնվազն մեկ երրորդ անձի ներկայությամբ կատարված արտահայտությունները և ներկայացված փաստերը: Վերջիններս երրորդ անձի ներկայությամբ կատարված են համարվում նաև այն դեպքում, երբ երրորդ անձը ևս կատարում է արտահայտություններ և

---

[4] ՀՀ Սահմանադրական դատարան, 2011: *Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի N ՍԴՈ-997 որոշումը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրության 14-րդ հոդվածին, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերին և 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, կետ 8*, Երևան

https://www.arlis.am/documentview.aspx?docID=72335

[5] Նույն տեղում, կետ 5, 8

ներկայացնում փաստեր, որոնք բովանդակային առումով կապված են վիրավորողի արած արտահայտությունների կամ ներկայացրած փաստերի հետ (օրինակ՝ երկու և ավելի անձանց կողմից վիրավորելը)։ Նման դեպքերում առկա է վնասի համատեղ պատճառում[6]։

3. Ատելության խոսքի համար քրեական պատասխանատվության ապահովման հայաստանյան փորձը։

ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածները համապատասխանաբար քրեական պատասխանատվություն են նախատեսել զրպարտության և վիրավորանքի համար մինչև 2010 թվականի մայիսի 18-ն ընդունված թիվ ՀՕ-98-Ն օրենքը[7]։ Նշված օրենքով օրենսդիրն ապաքրեականացրեց նշված արարքները՝ որպես հիմնավորում նշելով հետևյալը.

> *«ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ եւ 136-րդ հոդվածներով նախատեսված է պատասխանատվություն զրպարտության և վիրավորանքի համար, սակայն խոսքի ազատության որևէ դրսևորման կապակցությամբ քրեական պատասխանատվությունը միջազգային ժողովրդավարական չափանիշներով չի համարվում համաչափ։ Նկատի ունենալով սույն հանգամանքը առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 135-րդ և 136-րդ հոդվածները (…)»։*

Միաժամանակ նշված օրենքի հիմնավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք ամբողջությամբ հիմնված են այն գաղափարախոսության վրա, որ ատելության խոսքի դեմ պայքարը պետք է լինի քաղաքացիական իրավական պաշտպանության միջոցների կիրառմամբ, դա բխում է խոսքի ազատության իրավունքի պաշտպանության անհրաժեշտությունից և միջազգային չափանիշներից[8]։

Սակայն 2021 թվականի հուլիսի 1-ին ընդունված թիվ ՀՕ-323-Ն օրենքով օրենսդիրը շեղվեց իր կողմից որդեգրած մոտեցումից՝ ՀՀ քրեական օրենսգրքում ըստ էության վերակենդանացնելով վիրավորանքի համար քրեական պատասխանատվությունը՝ «ծանր վիրավորանքի» հանցակազմի ներքո[9]։ Մասնավորապես, ընդունված նոր օրենքով ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ.

---

[6] ՀՀ վճռաբեկ դատարան, 2014։ *Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի՝ թիվ ԱՎԴ/0179/02/13 քաղաքացիական գործով որոշումը, կետ 4*, Երևան

https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90965

[7] ՀՀ Ազգային ժողով, 2010։ *Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, N ՀՕ-98-Ն*, Երևան

https://www.arlis.am/documentview.aspx?docid=58946

[8] ՀՀ Ազգային ժողով։ *Տեղեկանք-հիմնավորում՝ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության*, Երևան

http://parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=3764&Reading=0#

[9] ՀՀ Ազգային ժողով, 2021։ *Հայաստանի Հանրապետության օրենքը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին, N ՀՕ-323-Ն*, Երևան

https://www.arlis.am/documentview.aspx?docid=155311

«1. Անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայհոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը, պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կամ անձի վերաբերյալ ծանր վիրավորանք պարունակող նյութեր տարածելը, որը՝

1) կատարվել է տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով կամ հրապարակային այլ եղանակով,

2) կատարվել է անձի հանրային գործունեությամբ պայմանավորված՝

պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է միևնույն անձի նկատմամբ պարբերաբար,

պատժվում է տուգանքով՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկից երեքհազարապատիկի չափով կամ կալանքով՝ մեկից երեք ամիս ժամկետով:

Սույն հոդվածում հանրային գործունեություն է համարվում անձի կողմից լրագրողական, հրապարակախոսական գործունեության, ծառայողական պարտականությունների կատարման, հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ կապված վարքագիծը»:

Որպես հիմնավորում՝ օրենսդիրը նշել է, որ ուսումնասիրությունների համաձայն՝ շեշտակիորեն նվազել է հանրային իշխանության և ընդհանրապես հանրային գործունեություն ծավալող անձանց նկատմամբ հարգանքը, ինչի վկայությունն այն է, որ հաճախակիացել են դեպքերը (հաճախ նաև համացանցի միջոցով, զանգվածային լրատվության միջոցներով), երբ անձին վիրավորում են՝ կապված վերջինիս լրագրողական կամ հրապարակախոսական գործունեության կամ ծառայողական պարտականությունների կատարման կամ հանրային ծառայության կամ հանրային պաշտոն զբաղեցնելու, հասարակական կամ քաղաքական գործունեության հետ: Ընդ որում, քրեական պատասխանատվության միջոցի համաչափությունը հետապնդվող նպատակը հիմնավորելու համար վկայակոչվում է խնդրի բնույթը, ծավալներն ու տարածման միտումները՝ ընդգծելով առկա իրավական միջոցների անբավարարությունը: Օրենքի նախագծի հիմնավորումները նաև ներկայացնում են միջազգային փորձը, այդ թվում՝ Գերմանիայի օրինակը, որտեղ քրեական պատասխանատվություն է սահմանված վիրավորանքի համար[10]:

Միաժամանակ, հարկ է նաև վկայակոչել ՀՀ ՍԴ-ի 2022 թվականի ապրիլի 29-ի որոշումը, որտեղ ՄԻՊ-ի դիմումի հիման վրա քննարկվել է ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածի սահմանադրականությունը: ՍԴ-ը գտել է, որ վիճարկվող հոդվածը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության պահանջներին՝ գտնելով, որ ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվություն նախատեսելով և այն իրավակիրառ պրակտիկայում խելամիտ կիրառելու դեպքում օրենսդրի կողմից հետապնդվող նպատակն իրականություն կարող է դառնալ,

---

[10] ՀՀ Ազգային ժողով, *Հիմնավորում՝ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի ընդունման*, Երևան

http://parliament.am/draft_docs7/P-1012_Himnavorum.pdf

ուստի անձի արժանապատվության, պատվի ու բարի համբավի, պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության պաշտպանությունն ինչպես առանձին, այնպես էլ իրենց համակցության մեջ, գերակա է կարծիքի արտահայտման ազատության սահմանափակման նկատմամբ:

Միաժամանակ դատարանը նշել է, որ «ցանկացած իրավադրույթի՝ հատկապես գնահատողական հասկացություններ պարունակող, նորմատիվ բովանդակության սահմանադրականությունն ինքնին չի բացառում նորմի՝ իրավակիրառ պրակտիկայում հակասահմանադրական մեկնաբանությունն ու կիրառումը: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ հայհոյանքի կամ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորանքի առկայության կամ բացակայության, ինչպես նաև արարքը որակյալ հանցակազմով որակելու հարցը, ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից, իրավակիրառ պրակտիկայի, այսինքն՝ վարույթն իրականացնող մարմնի, այդ թվում՝ եռաստիճան դատական համակարգի գնահատման տիրույթում է: Իրավակիրառ և դատական մարմինները պետք է առաջնորդվեն վիճարկվող դրույթի որակման միասնական պրակտիկա ձևավորելու հրամայականով, ինչը կնպաստի իրավական կանխատեսելիության բարձրացմանը և վերացական հասկացությունների գնահատման հայեցողության սահմանների հստակեցմանը»[11]:

Վերոգրյալի հետ մեկտեղ, ըստ ՀՀ ԳԴ-ի հրապարակած տվյալների՝ 2022 թվականի ապրիլի 28-ի դրությամբ առերևույթ ծանր վիրավորանք հասցնելու դեպքերի առթիվ նախապատրաստված 938 նյութերից 802-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 425-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1 հոդվածի 1-ին մասի, 377-ը՝ 2-րդ կամ 3-րդ մասերի հատկանիշներով: Քրեական գործերից 621-ը, այսինքն՝ շուրջ 77.5%-ը հարուցվել է ուղիղ հայհոյանք հնչեցնելու, իսկ 181-ը կամ ընդամենը 22.5%-ը՝ այլ ծայրահեղ անպարկեշտ արտահայտություններով ծանր վիրավորանք հասցնելու փաստերով:

Ըստ նույն ժամանակաշրջանի տվյալների՝ քննված կամ քննվող գործերով մեղադրանք է առաջադրվել ընդհանուր 160 անձի, որոնցից 131-ին՝ ուղիղ հայհոյանք հնչեցնելու, 29-ին՝ այլ ծայրահեղ անպարկեշտ որակումներ և արտահայտություններ անելու համար:

Միաժամանակ 2022 թվականի ապրիլի 1-ի դրությամբ մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 51 անձի վերաբերյալ 48 քրեական գործ, որոնցից 15 գործ՝ 16 անձի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ 33 գործ՝ 35 անձի վերաբերյալ՝ նույն հոդվածի 2-րդ կամ 3-րդ մասերով նախատեսված արարքներ կատարելու համար: 6 անձի վերաբերյալ 6 քրեական գործով կայացվել են մեղադրական դատավճիռներ, իսկ մյուս գործերով դատական քննությունը շարունակվում է[12]:

---

[11] ՀՀ Սահմանադրական դատարան, 2022: *Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի N ՍԴՈ-1646 որոշումը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137.1-ին հոդվածի՝ սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, կետ 5,6*, Երևան

https://www.arlis.am/documentView.aspx?docid=162565

[12] Հայաստանի Հանրապետության դատախազություն, 2022: *Ծանր վիրավորանքի հատկանիշներով հարուցվել է 802 քրեական գործ, մեղադրական եզրակացությամբ դատարան է ուղարկվել 51 անձի վերաբերյալ 48 գործ. ամփոփում*

https://www.prosecutor.am/am/mn/8550/

Եզրակացություն

Այսպիսով, ամփոփելով սույն հետազոտությունը՝ հանգում ենք հետևյալ եզրահանգման.

2021 թվականի հուլիսի 1-ին ընդունված թիվ ՀՕ-323-Ն օրենքով քրեականացված ծանր վիրավորանքը՝ որպես ատելության խոսքի դեմ պայքարի արդյունավետ միջոց, չի կարող դիտարկվել: Ընդ որում, մի շարք արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքերում դրա նախատեսված լինելու հանգամանքը չի կարող դիտարկվել որպես լիարժեք հիմնավորում այդ պայքարի միջոցն ընդունելի համարելու համար: Այս առումով հատկանշական է, որ ինչպես մեջբերվել է սույն հետազոտության մեջ, արտասահմանյան մի շարք երկրներ քննադատության են ենթարկվում հենց այդ կարգավորումների համար՝ ատելության խոսքի դեմ անհամաչափ միջոցով պայքարելու պատճառով:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք երկրների համար խորհուրդ է տրվում փոխարինել ատելության խոսքի դեմ քրեական պատասխանատվության միջոցները քաղաքացիաիրավական և վարչաիրավական պատասխանատվության միջոցներով: Նշվածները համարվում են առավել արդյունավետ միջոց ատելության խոսքի դեմ պայքարելու համար: Այդ պատճառով էլ, ինչպես նշվեց սույն ուսումնասիրության նախորդ հատվածներում, մի շարք երկրների դեպքում օրենսդիր մարմինները հրաժարվել են ատելության խոսքի համար քրեական պատասխանատվությունից և դրանք փոխարինել են այն վարչական կամ քաղաքացիական պատասխանատվության միջոցներով:

Գործող քրեական օրենսգրքում որպես ծանր վիրավորանքի քրեականացման հիմնավորում օրենսդրի կողմից նշվել է առկա իրավական միջոցների անբավարարությունը: Սակայն, միաժամանակ, որպես հիմնավորում չի նշվում, թե ինչ այլընտրանքային միջոցներ են կիրառվել, որոնք ցույց են տվել դրանց անարդյունավետությունը քրեական՝ ծայրահեղ պատասխանատվության միջոցին դիմելու համար: Այս առումով պետք է հաշվի առնել, որ քրեական պատասխանատվության միջոցն ընտրելիս պետությունը ծախսում է իր «ամենաթանկ» ռեսուրսն ատելության խոսքի դեմ պայքարելու համար այն դեպքում, երբ այն նախատեսված է իր բնույթով հանրային բարձր վտանգավորություն ներկայացնող հանցագործությունների բացահայտման համար: Մինչդեռ տվյալ դեպքում խնդրո առարկան ընդամենն ատելություն պարունակող հրապարակային խոսքի դեմ պայքարն է, որի դեմ, ի դեպ, վարչաիրավական միջոցների կիրառմամբ պայքարելու համար մինչ օրս որևէ փորձ չի արվել: Վարչաիրավական միջոցների անարդյունավետության մասին որևէ հետազոտություն չկա: Այնինչ, ելնելով ԳԴ-ի կողմից ներկայացված վիճակագրական տվյալներից՝ պետությունը ներկայումս ծախսում է աննախադեպ ռեսուրսներ ծանր վիրավորանքի դեպքերով հետաքննություն, նախաքննություն, այնուհետև՝ դատական քննություն իրականացնելու համար, որպեսզի գերակշիռ դեպքերում՝ անձի նկատմամբ նշանակի տուգանք, ինչը կարելի էր անել նաև վարչաիրավական պատասխանատվության միջոցների կիրառմամբ: Ամեն դեպքում, եթե նույնիսկ պետությունը ցանկանում է քրեական պատասխանատվության գործիքներ ևս ունենալ ատելության խոսքի դեմ պայքարելու համար, ապա որպես այլընտրանք կարող էր նախատեսվել վարչական պրեուդիցիայի գաղափարը: Այսինքն՝ վիրավորանքի համար վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո արարքը որոշակի ժամանակահատվածում կրկնելուց հետո միայն անձը կարող էր ենթարկվել քրեական պատասխանատվության:

Միաժամանակ կարելի է ամրապնդել ատելության խոսքի համար քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցները՝ տարբերակված փոխհատուցման չափ նախատեսելով՝ կախված վիրավորանքի աստիճանից, սուբյեկտից և այլ հատկանիշներից:

Այլ կերպ, անհրաժեշտ է նախատեսել այլընտրանքային կառուցակարգեր, որպեսզի ատելության խոսքի համար քրեական պատասխանատվության միջոցի կիրառումը լինի ծայրահեղ, այլ ոչ թե որպես ընդհանուր կանոն, ինչպես ցույց է տալիս ԳԴ-ի կողմից ներկայումս հրապարակված վիճակագրությունը՝ վկայելով քրեական պատասխանատվության միջոցի կիրառման լայնամասշտաբության մասին, այն է՝ ծանր վիրավորանքի քրեականացումից մի քանի ամիս անց շուրջ 802 քրեական գործ է հարուցվել այդ հոդվածով։

Միաժամանակ անդրադառնալով այն հանգամանքին, որ ՍԴ-ն Սահմանադրությանը համապատասխանող է ճանաչել խնդրո առարկա հոդվածը՝ հարկ է նկատել, որ այլ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ ՍԴ-ն չէր կարող մատնանշել, որ անհրաժեշտ է քրեական պատասխանատվության միջոցը փոխարինել վարչական պատասխանատվության միջոցով, թեև ՍԴ-ն ևս իր որոշման շրջանակներում որոշակի խնդիրներ է տեսել ծանր վիրավորանքի հոդվածով ձևավորվող իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ։ Այդ պատճառով էլ իր որոշման մեջ ընդգծել է իրավակիրառ պրակտիկայում ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվության միջոցի կիրառման «խելամտության» կարևորությունը, ինչը որոշակիորեն խնդրահարույց կարող է դիտարկվել՝ դատելով ներկայումս ձևավորված վիճակագրական տվյալներից։

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ ատելության խոսքի դեմ պայքարում քրեաիրավական պատասխանատվության միջոցները պետք է փոխարինվեն առավելապես քաղաքացիաիրավական և մասնավորապես՝ վարչաիրավական պատասխանատվության միջոցառումների կիրառմամբ, որոնց մասին նշում են նաև միջազգային կառույցները՝ տարբեր երկրների քրեաիրավական համապատասխան կարգավորումների վերաբերյալ իրենց ներկայացրած զեկույցներում։

Առաջարկություններ

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով սույն հետազոտության մեջ ներկայացված միջազգային չափանիշները՝ ատելության խոսքի դեմ արդյունավետ կանխարգելիչ միջոցառումներ ունենալու և իրավական պատասխանատվության ապահովման գործուն կառուցակարգ նախատեսելու համար առնվազն անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ քայլերը.

1) գործող քրեական օրենսգրքի 137.1-րդ հոդվածով նախատեսված ձևակերպմամբ ծանր վիրավորանքն ապաքրեականացնել,
2) ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի՝ հասարակական կարգի դեմ ոտնձգություն արվող վարչական իրավախախտումների շարքում նախատեսել վիրավորանքի համար վարչական պատասխանատվություն,
3) ամրապնդել ատելության խոսքի համար քաղաքացիաիրավական պատասխանատվության միջոցները՝ տարբերակված փոխհատուցման չափ նախատեսելով՝ կախված վիրավորանքի աստիճանից, սուբյեկտից և այլ հատկանիշներից,
4) ծանր վիրավորանքի համար քրեական պատասխանատվության միջոցը պահպանելու դեպքում այն նախատեսել միայն վարչական պրեուդիցիայի եղանակով, այն է՝ սահմանելով, որ վարչական պատասխանատվության ենթարկվելուց հետո մեկ տարվա ընթացքում արարքը կրկնելու դեպքում միայն անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության։

Գրականություն

ARTICLE 19, 2018a. *Austria: Responding to "Hate Speech."* London. https://www.article19.org/wp-content/uploads/2018/09/Austria-Responding-to-Hate-Speech-.pdf

ARTICLE 19, 2018b. *Responding to "hate speech": Comparative Overview of six countries.* London. https://www.article19.org/wp-content/uploads/2018/03/ECA-hate-speech-compilation-report_March-2018.pdf

ARTICLE 19, 2018c. *Germany: Responding to "hate speech."* London. https://www.article19.org/wp-content/uploads/2018/07/Germany-Responding-to-%E2%80%98hate-speech%E2%80%99-v3-WEB.pdf

ARTICLE 19, 2018d. *Hungary: Responding to "hate speech."* London. https://www.article19.org/wp-content/uploads/2018/03/Hungary_responding_to_HS.pdf

Bayer, J., Bárd, P., 2020. *Hate Speech and Hate Crime in the EU and the Evaluation of online content regulation approaches*. https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2020/655135/IPOL_STU(2020)655135_EN.pdf

Griffen, S., 2017. *Defamation and Insult Laws in the OSCE Region: A Comparative Study. Organization for Security and Co-operation in Europe*. https://www.osce.org/files/f/documents/b/8/303181.pdf

Աբստրակտ

Այս հետազոտությունը նպատակ ունի ներկայացնելու Հայաստանի Հանրապետությունում ատելության խոսքի համար պատասխանատվության հայեցակարգային խնդիրների ներկա վիճակը: Ատելության խոսքի կանխարգելումն իրավական պետությունների մարտահրավերներից է, հետևաբար կանխարգելման արդյունավետությունն ուղղակիորեն կախված է հասարակության մեջ բարձր մակարդակի ատելության խոսքի դեմ պայքարի առկա մեխանիզմներից: Սա նաև մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության ամենաուժեղ երաշխիքներից է: Հակառակ դեպքում ատելության խոսքը նպաստում է օրենքի գերակայության, սահմանադրական և միջազգային սկզբունքների ու կանոնակարգերի խախտմանը: Այդ իսկ պատճառով 21-րդ դարի նոր մարտահրավերներին զուգահեռ՝ ներառյալ COVID-19-ի բռնկումը և կլիմայական ճգնաժամը, միջազգային կառույցները և հանրությունն իրենց ջանքերն են ներդնում ատելության խոսքի կանխարգելման մեխանիզմների ամրապնդման ուղղությամբ:

Նկատի ունենալով թեմայի՝ վերը նշված կարևորությունը՝ այս հետազոտությունը գնահատում է Հայաստանի Հանրապետությունում ատելության խոսքի դեմ պայքարի առկա մեխանիզմները: Հիմնվելով միջազգային փորձի և չափանիշների վրա՝ հետազոտությունը ներկայացնում է Հայաստանում ատելության խոսքի դեմ պայքարում վարչական, քաղաքացիական և քրեական պատասխանատվության հնարավոր գործիքները:

Հետազոտության շրջանակներում քննարկվում են այնպիսի հարցեր, ինչպիսիք են պետական ռեսուրսների արդյունավետության և ատելության խոսքի համար քրեական պատասխանատվության հարաբերակցությունը, ատելության խոսքի համար վարչական և քաղաքացիական պատասխանատվության իրավական բնույթն ու արդյունավետությունը: Վերջում, կատարված վերլուծության հիման վրա հետազոտությունը ներկայացնում է մի շարք գործնական եզրակացություններ և մի շարք առաջարկություններ՝ ուղղված ատելության խոսքի համար հայրենական պատասխանատվության կառուցակարգը բարեփոխելուն:

Բանալի բառեր. խոսքի ազատություն, ազատ արտահայտման իրավունք, ատելության խոսք, վիրավորանք, զրպարտություն

Abstract

This research aims to present the current situation of conceptual problems of responsibility for hate speech in the Republic of Armenia. The prevention of hate speech is among the challenges of states governed by the rule of law. Therefore, the effectiveness of prevention is directly dependent on the available mechanisms to combat high-level hate speech in society. This is also one of the strongest guarantees of protection of fundamental human rights and freedoms. Otherwise, hatred contributes to the violation of the rule of law, constitutional and international regulations. That is why, alongside the new challenges of the 21st century, including the COVID-19 outbreak and climate crisis, international institutions and the community are contributing their efforts to strengthen the prevention mechanisms of hate speech.

Bearing in mind the abovementioned importance of the topic, this study evaluates the current mechanisms of tackling hate speech in the Republic of Armenia. Based on the international experience and standards, the research presents the possible administrative, civil and criminal responsibility tools in Armenia dealing with hate speech.

Within the scope of the research, such issues are discussed as the nexus of the effectiveness of state resources and criminal responsibility for hate speech, the legal nature and efficiency of administrative

and civil responsibility for hate speech. Finally, based on the conducted analysis, the research presents a number of practical conclusions and a number of recommendations aimed at reforming the framework of domestic responsibility for hate speech.

Keywords: freedom of speech, right to free expression, hate speech, insult, defamation